Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ <<Ազգային տոների,ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում>>

Հաստատություն՝ <<Երևանի հ.28 մսուր-մանկապարտեզ>> ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Հակոբյան Մարինե

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

Երևան 2022թ.

Բովանդակություն

1. Ներածություն----------4
2. Թեմայի բովանդակության պարզաբանում----------8
3. Պարապմունքի պլան----------10
4. Եզրակացություն----------15
5. Գրականության ցանկ----------16

ԱՂՕԹՔ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ

Հա՛յր մեր, որ յերկինս է,
սուրբ եղիցի անուն Քո։
Եկեսցէ արքայութիւն Քո։
Եղիցին կամք Քո որպէս
յերկինս եւ յերկրի։
Զհաց մեր հանապազորդ
տո՛ւր մեզ այսօր։
Եւ թո՛ղ մեզ պարտիս մեր,
որպէս եւ մեք թողումք
մերոց պարտապանաց։
Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն,
այլ փրկեա՛ զմեզ ի չարէ։
Զի Քո է արքայութիւն
եւ զօրութիւն եւ փառք
յաւիտեանս. ամէն։

Ներածություն

Հայոց ազգային տոները տարբեր ժամանակներում տարբեր դրսևորումներ և վերաիմաստավորումներ են ունեցել:Սակայն այս տոների արմատներն այնքան խորն են եղել ժողովրդի ինքնագիտակցության մեջ,որ ժամանակի կրոնաքաղաքական փոփոխությունները նույնպես չեն կարողացել ազդել դրանց վրա:

Հայկական մշակույթը հնուց ի վեր, մինչև օրս էլ աչքի է ընկնում իր բազմաթիվ և յուրօրինակ ազգային տոներով:Այս տոները մենք նշում ենք որպես քրիստոնեական և եկեղեցական տոներ,օրինակ՝ Ամանորը,Սուրբ Ծնունդը,Ծաղկազարդը,Սուրբ Զատիկը և այլն:Այս տոները մանկապարտեզում ներկայացվում են երեխաներին և տոնվում են մեծ շուքով:

Անհնար է պատկերացնել նախադպրոցական տարիքի երախաների հետ անցկացվող պարպմունքներն առանց տոների:Մանկապարտեզում տարվող տոնական հանդեսների,պարապմունքների, զվարճանքների կազմակերպումն ու անցկացումը մանկավարժական աշխատանքի կարևոր մասն են կազմում:Դրանց շնորհիվ իրագործվում են երեխաների բարոյական,մտավոր, գեղագիտական, ֆիզիկական դաստիարակության աշխատանքային խնդիրները:

Մշակույթը չի պահպանվի,եթե սերնդեսերունդ չփոխանցվի:

Ծես-նշանակում է նվիրում,ընտելացում տվյալ կրոնին և արժեքների համակարգին,ազգությանն ու պետությանը:Ծեսերը աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով:Ազգային ծեսերը մշակույթի այն տարրերն են,որոնք առավել կարևոր են ազգային արժեքների պահպանման գործում: Ազգային տոների ու ծեսերի միջոցով երեխաներին ծանոթացնում ենք ազգային խոհանոցին, ուտեստներին,երգ ու պարին,տարազային հագուստներին և ազգային կատակ-խաղերին:

Երեխաներին սովորեցնում ու ծանոթացնում ենք ազգային տոներին,ծիսական երգերին,ծեսի խորհրդին ու նշանակությանը՝ ստեղծելով համապատասխան միջավայր՝ օգտագործելով անհրաժեշտ պարագաներ,դետալներ և նյութեր:Ծեսի իրականացումը նպատակ ունի փոխանցել սերունդներին հայկական մշակութային ժառանգության բազմաշերտ արժեքները՝ նպաստելով երեխաների հայեցի դաստիարակությանը և իրական արժեքների ձևավորմանը,թեպետ երեխաները ամբողջովին չեն կարող ընկալել ծեսի իմաստն ու նշանակությունը,սակայն նրանց ճիշտ ուղղորդելով՝ կարելի է շատ մեծ արդյունքի հասնել:Հայկական ծեսերի հարուստ երգն ու պարը միշտ բովանդակությամբ համապատասխանում են ծեսին:

Թեմայի բովանդակության պարզաբանում

Անդրադարձել եմ ծեսին,թե ինչ է իրենից ներկայացնում ծեսը, ինչպես ենք այն իրականացնում, ինչ կարող ենք սովորել ծեսի միջոցով և այն փոխանցել երեխաներին:

Ներկայացրել եմ ծեսի իմաստը,դերը և նշանակությունը:

Պարապմունքի ընթացքում ծեսը իրականացրել եմ ցերեկույթի,պարապմունքի և խաղի միջոցով,քանի որ դրանք համարվում են երեխաների ուսուցման և դաստիարակման բաղկացուցիչ մասը:Ծեսի նպատակը այն է,որ երեխաների մոտ զարգանա սեր դեպի ազգայինը:Երեխաները ծանոթանան ազգային ծեսերին,ինչպես նաև ունենան իրենց մասնակցությունը ծիսական կատարումների մեջ՝ ստանձնելով իրենց դերը՝ կերպարները կերտելու գործում:Ծեսերի իրագործման գլխավոր նպատակներից մեկն էլ այն է,որ չմոռացվեն ազգային մշակույթի արժեքները:Այս դեպքում երեխան հանդիսանում է ծեսը պահպանողը, փոխանցողը դեպի տուն և շրջակա աշխարհ:

Գործնական աշխատանքները ցույց են տվել,որ նախադպրոցական տարիքի երեխան ծիսական բնական,անկաշկանդ,ազատ միջավայրում կիրառում է իր գիտելիքները,հմտությունները և ձևավորում է արժեհամարկարգ,զարգանում է երևակայությունը,կարողանում է ազատ արտահայտել իր միտքը :

Պարապմունքների նպատակն է ծեսը,տոնը դարձնել երեխայինը,որն էլ կլինի ոչ միայն մասնակից,այլ նաև փոխանցող:

Պարապմունքի պլան

Նախապատրաստական աշխատանք՝

Նախապատրաստական զրույցը սկսեցի <<Սուրբ Զատիկ>>-թեմային համահունչ փոքրիկ հորինված քառատողով:

Բերին մթին լույս ճրագը,
Առավոտին պատարագը,
Եկեք նշենք ցնծությամբ,
Սուրբ Հիսուսի տոնն հարության:

Անհրաժեշտ նյութեր՝

տոնին համապատասխան նկարներ,դիդակտիկ նյութեր,դեկորատիվ պարագաներ,կենաց ծառ:

Ընթացքը՝

Խմբասենյակը ձևավորել տոնին համապատասխան դիդակտիկ նյութերով և նկարներով:Երեխաներին առաջարկել դիտել նկարները և պատմել 3-4 նախադասությամբ:Երեխաների հետ զրուցել Սուրբ Զատկի հարության տոնի,ծեսի կարևորության և նշանակության մասին,թե ինչ է նշանակում <<Զատիկ>>.

Զատիկը հայ առաքելական Սուրբ եկեղեցու հինգ տաղավար տոներից մեկն է:Սուրբ Հարության տոնին նախընթաց երեկոյան եկեղեցիներում մատուցվում է ճրագալույցի Սուրբ պատարագ:Զատիկ նշանակում է զատում,բաժանում,հեռացում մեղքերից և վերադարձ առ Աստված:Զատկի տոնին հավատացյալները ձու են ներկում:Ներկած ձուն համարվում է հարության և նոր կյանքի խորհրդանիշ:Կարմիր գույնը խորհրդանշում է խաչյալ Հիսուսի կենդանարար արյունը,որը թափվեց մարդկության փրկության համար և նշանակում է ,թե ամողջ աշխարհը մաքրվեց Քրիստոսի արյունով:Եվ մենք կարմիր ձուն մեր ձեռքերի մեջ առնելով՝ հռճակում ենք մեր փրկությունը:Միայն Զատկին են ձու ներկում,որովհետև ձուն<< օրինակն է աշխարհի>> և ինչպես իմաստուններն են ասում՝ <<Դրսի կեղևը նման է երկնքի, թաղանթը օդի,սպիտակուցը ջրի,դեղնուցը երկրի>>:

Հավատացյալ ժողովուրդը Զատկի տոնին միմյանց ողջունում են հետևյալ խոսքերով՝ <<Քրիստոս Յարյավ ի մեռելոց>> և ի պատասխան <<Օրհնյալ է Յարությունը Քրիստոսի>>:



Ֆիզդաստարը իրականացնել ըստ կարիքի՝

Ունենք ներկած հավկիթներ,
Եկեք խաղանք
Այ այսպես,այ այսպես:

Իրար զարկենք ու հաղթենք,
Այ այսպես,այ այսպես,
Շատ հավկիթներ հավաքենք
Այ այսպես,այ այսպես:

Բացի հավկիթ ներկելուց,պատրաստում ենք ավանդական կերակուրներ՝ չամչով փլավ,տապակած կանաչի,կաթնահունց,ձուկ և կարմիր գինի:Գինին այն խմիչքն է,որը Հիսուսը խմել է իր աշակերտների հետ և որով թրջել է հացը և բաժանել աշակերտներին՝ ասելով <<Գինին իմ արյունն է,հաց՝ իմ մարմինը>>:

Զատկի չամչով փլավի բրինձը խորհրդանշում է ժողովրդին,իսկ չամիչը՝ հոգևորականներին:Այսինքն բրինձը մարդիկ են,իսկ չամիչը Հիսուսի աշակերտներն են,որոնք պետք է տարածեն Հիսուսի խոսքը:Զատկի խորհրդանիշ է նաև ձուկը,որովհետև Հիսուսը իր աշակերտների հետ նաև ձուկ է կերել:

Պասխա կոչվող կաթնահունց հացը նույնպես դնում են Զատկի սեղանին:Այն խորհրդանշում է Հիսուսի փշե պսակը:Կաթնահունցի վրա քունջութ են լցնում,որպիսի փշի տեսք ունենա:

Զատկի խորհրդանիշ է համարվում նաև կենաց ծառը:

Ըստ Աստվածաշնչի,կենաց ծառը եղել է այն բարու և չարի իմացության կամ ճշմարտության ծառը,որի պտուղները Աստծո կամքին հակառակ ճաշակեցին Ադամն ու Եվան:Այն խորհրդանշում է կյանքի աստիճանական զարգացումը,որը բացատրում է ծառի արմատակալումից մինչև մեծանալու,ճյուղակալման ընթացքով:Եվ ի վերջո ծառի հիմնական գաղափարը հավերժությունն է:

Վերջում ձվիկներով ու ճուտիկներով զարդարում ենք կենաց ծառը:Զարդարելու ընթացքում երեխաները երգում են Սուրբ Զատկի թեմային համապատասխան երգեր:

Եզրակացություն

Ես՝ ունենալով իմ աշխատանքային պրակտիկայում երկար տարիների փորձ, հասել եմ համապատասխան արդյունքի՝ երեխաների մեջ սերմանելով և ուսուցանելով սեր հայրենիքի,ազգային տոների և ծեսերի նկատմամբ:Ազգային արժեքները ճիշտ գնահատելու կարողություն՝ նպաստելով երեխաների հայեցի դաստիարակությանը:

Պարապմունքները լիարժեք,տպավորիչ և հետաքրքիր իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ տոների,ծեսերի,հայկական տարազներ պատկերող նկարներ և համապատասխան դիդակտիկ նյութեր:

Գրականության ցանկ

1. Նախադպրոցական մանկավարժություն
2. Վիքիպեդիայի ազատ հանրագիտարան
3. Նախադպրոցական մանկավարժության ձեռնարկ
4. 4-5տարեկանների դաստիարակի ուղեցույց